**Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Խաչփարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար (18 դասաժամ), դասվար (17 դասաժամ), դասվար (17 դասաժամ), աշխարհագրություն (16 դասաժամ),բնագիտություն (2 դասաժամ),, բնություն (2 դասաժամ), տեխնոլոգիա՝(տղաների խումբ՝ 3 դասաժամ), երաժշտություն (6 դասաժամ), ֆիզիկա (16դասաժամ), հասարակագիտություն (9 դասաժամ), կենսաբանություն (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելո ւհամար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայությանդեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. **հոկտեմբերի 20**-ից մինչև **հոկտեմբերի 29**-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը **10:00-ից 15:00**-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. նոյեմբերի 2-ին՝ ժամը 14:30-ին**, Խաչփարի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Խաչփար, 5-րդ փող. 15շ.: Տեղեկությունների համար զանգահարել 055131211 հեռախոսահամարով: